

83
39-57

16/63

2011

6 2003

3-3
5-7.8

110

ՄԱԼԻՐՈՒՄ ԵՎԿԱՅԻ

Ա Կ Բ Ա Ց Ո Ղ Ե

ԳԵՐՄ. ԹԱՐԳ.Մ.

Իսական Յայրութիւննեանց

(Արտաստպած „ՀՈՒՄՈՐ Ա ՅԱՌԱՆԴԻՍԻՑ»)



F. H. C. L. H. u

Տպարան Մ. Շարածէ եւ Ընկ., Նիկ. 21.

1900

83-3

3n-52

ՄԱԼԻՐՈՒՄ ԵՎԿԱՅԵ

Այ

Ո Ւ Բ Ա Ց Ո Ղ Բ

ԴԵՐՄ. Թ-Ա.Բ.

Խառնութեան Յարութիւն

1001
1598

(Արտասոված „ՀՈՒՄԱՑԱՅԻՆ ՀԱՆԴԻՍԻՑԻ“:

2/5



Ժ Ի Շ Լ Ի Ա

Տպարան Մ. Շարածէ եւ Ըսկ., Նիկ. 21-

1900

269 ԱՐԱ ՊԵՂԱՎԱՐԱ

ԳՐԱՑՄԱԿԱ

Дозволено цензурою, Тифлисъ, 3-го Мая 1900 г.

ՈՒՐԱՑՈՂԸ

(ՄԱՍՏԻՌՈՒՆ ԽՈԿԱՅԻ)



Կալեղը, որ մարգարէի և կւր
արատե յաղթութիւնների շնոր-
հիւ «Սատուծոյ սուր» հա-
մարձակ մականունն էր
ստացել, Հռովմէական կայսրութեան ասիա-
կան կալուածքների վրայ յարձակուելով ար-
դէն հարիւր երեսուն ասպարէզ առաջ էր
գնացել:

Իւր յաղթական ճանապարհի վրայ, որ
ներկուած էր քրիստոնեաների արիւնով, Կա-
լեղը ստիպուեց կանգ առնել Դամասկոս քա-
ղաքի առաջ: Այստեղի զօրաց հրամանատարն
էր արիասիրտ Թովմասը, Ներակլ կայսեր փե-

սան. այդ միջոցին քաղաքում ապրում էին
քառասուն հազար քրիստոնեայ լոյներ:

Արդէս եօթը շաբաթ անցել էր, բայց
կալէդը դեռ չէր կարողացել Դամասկոսի պա-
րիսպներին տիրել: Թովմասի ընկեցները ոչն-
չացրել էին նրա պաշարման աշտարակները
և չնայելով, որ նա յաճախ լցնել էր տա-
լիս պատնէշների ականները, այսուամենայնիւ
լունաց կողմից արձակուած կրակը շարունակ
լափում էր յարդեայ և եղեգնի կապոցները,
թէւ ամեն մի կապոց նախապէս փաթաթուած
էր լինում ուղտի թրջած մորթիով: Բացի դրա-
նից՝ Թովմասը յաճախ երեսում էր պարիսպնե-
րից դուրս և գիշերային արիւնալի կորուներով
ծանը կորուստներ էր պատճառում քաղաքը
պաշարողներին:

* * *

Մի գիշեր արաբացի գիշերապահների մի
խումբ, որ յաճախ թափառում էր պարիսպ-
ների շուրջը, մի պատնէշի յետեւը գտաւ երկու
թամբած և սանձած՝ հեծնելու պատրաստի
ձիեր, առանց ձիաւորների: Այդ ձիերը հան-
գիստկանգնած էին միմեանց կողքի՝ չնմանուե-
լով այն անտէր ձիերին, որոնք հենց որ մե-

նակ են մնում, սկսում են սանձը բերանում
արածել: Այս ձիերը սպասում էին մէկին:

Սարակինոսներն այդ ձիերը նկատեցին իբ-
րև մի ցանկալի աւար և ուզում էին տիրա-
նալ նրանց, բայց երկու կենդանիներն էլ ոչո-
քի մօտ չէին թողնում: Եթէ նրանց միայն
մի մարդ էր մօտենում, աքացում էին, եր-
կուսի կամ երեքի դէմ միասոին էին կռւում
խփում ու կծում, իսկ եթէ շատերն էին մօ-
տենում, նրանք շրջապատողների միջից անց-
նելով, աջ ու ձախ էին վազում և ալսակիսով
իրենց հալածող արաբացիներին օրինաւոր լոգ-
նեցնելով՝ վերագանում էին իրենց նախկին
տեղերը, պատնէշի յետեր:

Արաբացիների առաջնորդը գառնալով իւր
ընկերակիցներին, կարծիք յալտնեց, թէ այս-
տեղ մի գաղտնիք պէտք է լինի և թէ այդ
գաղտնիքն իմանալն երկու թամբած ձիերից
աւելի մեծ արժէք կունենայ, ուստի պէտք է
պարսպի յետեւը թագնուած հսկել, մինչև որ
գաղտնիքը բացուի:

Արաբացիները լուռ ու մունջ թագնուե-
ցին ծառերի ու թփերի յետեր, փոսերի մէջ:

Երբ գերանդիազէն պահակն արևելեան
Հորիզոնից իջաւ, մի մարտկոցի աշտարակից
յանկարծ հնչեց կարճ սպլոց, որից յետով ձիե-

ըից մէկը թողեց իւր ընկերոջը և արշաւեց
այդ մարտկոցի աշտարակի ուղղութեամբ:

Նոյն միջոցին սարակինոսները տեսան, որ
մի մարդ աշտարակից պարանով իջնելով՝ հեծաւ
ներքեռմ պատրաստի կանգնած ու իրեն սպա-
սող ձին և կամաց դէպի պատճէշն արշաւեց:

Դեռ ձիաւորը չէր հասել պատճէշին,
երբ երեք հարիւր ձողաչափ հեռաւորութեան
վրայ գտնուող երկրորդ մարտկոցի աշտարա-
կից հնչեց կրկնակի սուլոց, որից յետոյ եր-
կրորդ ձին նոյնպէս թողեց իւր տեղը և մօ-
տեցաւ երկրորդ աշտարակին:

Միայնակ ձիաւորն ուղիղ ճանապարհով
արշաւեց դէպի պատճէշը:

Սարակինոսների առաջնորդը պատուիրեց
իւր մարդկանցը հանգիստ մնալ, ասելով թէ,
որովհետեւ երկրորդ աշտարակից իշնող մարդը
նոյնպէս այստեղ կգալ, մենք երկու թուչունն
էլ մի ցանցով կորսանք:

Բայց նախորդ ձիաւորը զգուշ էր. նա
հասնելով պատճէշին, առաջ սկսեց իւր շուր-
ջը զննել, հետազօտեց ամեն մի փոս, ամեն
մի անկիւն, որպէս զի տեսնէ, թէ արդեօք ոչ
ոք չէ թագնուած այդտեղ: Զին նրան տա-
ռաւ ուղիղ արաբացիների թագնուած տեղը:
Նա վարժ ձիավար լինելով՝ հեշտու-

թեամբ կարող էր փախչել, որովհետեւ պարս-
պի դժւուը շատ մօտ էր և անմտութիւն կլի-
նէր, եթէ արաբացիները մինչև այնտեղ հա-
լածէին նրան: Բայց թէ ինչու նա չփախաւ,
ինչու աւելի լաւ համարեց սուրը հանել և
միայնակ թշնամու գնդի վրայ յարձակուել և
առանց որ և է օգնութեան նրանց հարուա-
ծել—այս բոլորը նա ստիպուած կինի շու-
տով խոստովանուել կալէդին:

Անվեհեր արիասրտութիւնը յաղթող չը-
հանդիսացաւ բազմութեան վրայ. երբ ֆա-
նատիկոս արաբացի քաջամարտիկներից մէկը
ջարդուած ընկած էր նրա ձիու պայտերի
տակ, յանկարծ իր ձեռքի սուրը խրեց ձիու
կողքը և ազնիւ կենդանին ընկնելով՝ իր տակը
թողեց ձիաւորին:

Խորամանկութեամբ խաբուած ասպետը
դեռ կռւում էր իր թշնամիների հետ, երբ արա-
բացիները խմբովին յարձակուելով նրա վրայ,
դէնքերը խլեցին և գետին գլորեցին նրան:

Ասպետն իւր երկաթապատ աշով ջարդեց
իրեն մօտեցողի երեսը և երկաթեայ սաղա-
ւարտով փշբեց իրեն գետին գլորող արաբացու
գանգը:

Հէնց այդ միջոցին հասաւ երկրորդ ձիա-
ւորը: Յաղթուած հերոսը լսեց նրա ձիու

ալայտերի տրոփիւնը և մի վերջին յուսահատական ջանքով արաբացիների միջից բարձրացաւ և յունարէն լեզուով բարձր կանչեց. «Թոչունը բռնուած է»:

Այդ լսելուն պէս երկրորդ ձիաւորն արագ շրջեց իր ձիու գլուխը և փախաւ:

Բռնուած ասպետին շղթայեցին:

«Տեսնում ես», հեգնութեամբ ասաց նրան արաբացին. «միւս ձիաւոր ընկերդ երկչութեամբ դաւաճանեց քեզ»:

Ս.սպետը հառաչելով պատասխանեց. «ընկերս, միւս ասպետը, աղջիկ էր»:

* * *

Կալանաւոր ասպետին տարան Կալէդի մօտ. նշանաւոր կալանաւ որներին սովորաբար միշտ տանում էին սարակինոսների գլխաւորի մօտ՝ նրա հետ «չափումլու» համար, իսկ անմօտ՝ նշանները «չափում» էին նրա զինուորների հետ:

Թէ ինչ էր նշանակում այս «չափումը»՝ իսկոյն կիմանաք: Կալէդը ոչ մի կալանաւոր չէր պահում իւր մօտ, ոչ էլ փրկագին էր վերցնում նրանց համար, այլ թողնում էր իւր զինուորներին, այդ կալանաւորների ոյ-

ժերը փորձելու համար տեղի ունեցած ճակատամարտից յետոյ:

Եթէ կալանաւորը յազմուում էր, Կալէդը հրամայում էր ազատ թողնել նրան, իւր զօրքերի շարքն էր դասում նրան և վարձ ու զէնք տալիս, իսկ յաղթող հանդիսացողներին հրամայում էր խմբովին մօտակայ գետափը տանել և նրանց արիւնը գետի մէջ թափելուց յետոյ, մարմիններն երեսանց գետնի մէջ թաղել, որովհետեւ Կալէդը գիւցազն մականունը ստանալիս Մահմեդին խոստումն էր արել՝ իւր յաղթական ճանապարհի վրայ գտնուող բոլոր գետերն անհաւատների արիւնով ներկել:

— «Դու քաջ'մարդ ես, յոյն», ասաց Կալէդը կալանաւոր ասպետին. «իմ ասպետները վկայում են այդ, բայց այժմ ինձ հետ պէտք է կռուես, կամենում ես»:

Կալէդը բարձրահասակ, զօրեղ, պնդակազմ և առիւծի ոյժ ունեցող մարդ էր, իսկ կալանաւորը կռուի մէջ նուազելով՝ միայն իւր ոյժերը կատարելապէս սպառելուց յետոյ էր միայն ընկճուել: Բայց այնուամենայնիւ պատասխանեց, որ ինքը պատրաստ է Կալէդի հետ կռուելու, որտեղ, երբ և ինչ զինքով որ նա կամենայ:

«Յոյն ասպետ, այս կռւում կեանքի և
մահուան խնդիր կորոշուի: Ո՞չ, աւելի ես, յա-
ւիտենական կեանքի և յաւիտենական մա-
հուան: Ամենից սիրով ո՞ր գէնքովն ես կռւում,
արդեօք նիզակովի:»

— Այս:

«Կամ գուցէ աւելի սիրով սրով կկռւես:»

— Այս:

«Կամ գուցէ լախտով:»

— «Թէալէտ ալդ ինձ համար մի փոքր ան-
սովոր բան է, բայց ալդ էլ ընդունում եմ»:

«Եթէ ալդալէս է, մենք կը կռուենք ոչ
սրով, ոչ նիզակով և ոչ էլ լախտով, այլ ա-
մենածանր գէնքով—խօսքերով: Ես յարձակուում
եմ քո հաւատի վրայ, պաշտպանուիր»:

Ասպետը ժպտաց. Հէնց ալդ բանում ի-
րեն զօրեղ էր զգում նա:

«Ուրեմն կռիւն սկսում է. — Դու կամե-
նում էիր փախչել իմ պաշարած Դամասկոս
քաղաքից: Դամասկոսի պարիսպները պաշտպան-
ուում են քաջ զինուորներով և որ դու նրանց
մէջ վատերից մէկը չես՝ ապացուցանում են
իմ զինուորների քեզնից ստացած արիւնոտ
վէրքերը:»

Բայց այնուամենայնիւ դու ուզում էիր

գիշերով գաղտնագողի փախչել այս փառքի
ասպարեզից»:

Ասպետը չէր պատասխանում:

«Երկրորդ ասպետը, որ քեզ հետ միասին
ուզում էր փախուստ տալ և որին դու խրա-
խուսեցիր յետ դառնալ, քո ասելով՝ աղջիկ էր:
Եթէ դու այդ բանը չասէիր էլ, ես կիմա-
նալի: Եթէ նա տղամարդ լինէր, կամ քեզ
կազատէր կամ թէ քեզ հետ միասին կը ըռ-
նուէր»:

Ասպետը լուռ գլխի շարժումով դրական
պատասխան տուեց:

«Այն աղջիկը, որի հետ ուզում էիր
փախչել, քո սիրելին էր: Որ դու նրա հետ
ուզում էիր փախչել, տպացոյց է, որ նրա
ազգականները չէին կամենում նրան քեզ կը-
նութեան տալ: Որ դու ստիպուած էիր նրա
հետ փախչել, տպացոյց է, որ նրա ազգական-
ները զօրեղ մարդիկ են Դամասկոսում: Եւ
որ դու այս փառքի ասպարեզից փախչել ցան-
կացար, տպացոյց է, որ դու շատ ես սիրում
նրան»:

Կալանաւորը մի խորը հառաջանք ար-
ձակեց:

«Ասածս ճիշտ է, այնպէս չէ»:

«Իսկապէս դու տեսնում ես պարիսպների

միջով և կարողանում ես սրտի խորքերը թափանցել։ Իրօք այնպէս է, ինչպէս որ ասացիր. ինձ մնում է միայն անուններ տւելացնել։ Այժմ քո առաջը կանգնած կալանաւորը կոչում է ասպետ Եօնաս, իսկ այն ազջիկը, որին սիրում եմ, մեր հրամանատար Թովմասի եղբօր դուստր Եւգոսիան է։ Պատմութեան բանալին հետեւեալն է։ Երեսուն օր է արդէն, որ դու պաշարել ես Դամասկոսը. քաղաքի պարիսպներն արգէն շատ տեղում վնասուած են։ Բայց քանի որ յարձակումն էիր գործում, դիմացդ շարունակ երկու անգամ աւելի զինուած մարդիկ էիր գտնում պատնէշների վրայ, քան թէ սպասում էիր դու՝ հիմնուելով լրտեսներիդ հաղորդածների վրայ։

«Ճիշտ որ ալդպէս էր. մեր ամեն մի յետ մղուած յարձակումն ողբալի հետեւանք էր ունենում լրտեսներիս համար, որովհետեւ անողորմաբար կախել էի տալիս նրանց»։

«Այդպէս էր լինում, որովհետեւ Թովմասը կանանցն էլ զինուորի հագուստ էր հագունում և երբ տղամարդիկը կուսում էին առաջին շարքերում, նրանց ետևում կանգնած կանայքն ու օրիորդները թշնամուն վախեց-

նում էին իրենց թուով և սպառագինութեամբ»։

«Նրանք էլ էին կռւում»։

«Երբ տղամարդիկ կռւում էին, նրանք նրանց տեղն էին բռնում»։

«Ի՞նչ սարսափելի միտք. միայն անհաւատները կարող են այդպիսի միտք յղանալ. միթէ կարելի է կնոջը տղամարդու հետ հաւասարեցնել և արքայութեան ճանապարհը բաց թողնել այդ երկրային ծաղկի համար։ Դու այդտեղ ծանօթացար այդ աղջկայ հետա»։

«Այս։ Ձեր յարձակման միջոցին երկու աղջիկ էին կանգնած իմ յետեր, Երկու թոյլ արարածներ. մէկը մեր զօրակետ Թովմասի աղջիկն էր, իսկ միւսը նրա եղբօր աղջիկը։ Այդ ժամանակ նրանք հէնց նոր էին վանքից դուրս եկել, ուր մեծացել էին կոյսերի հսկողութեան ներքոյ»։

«Այն օրը դու երեք մարդու վոխարէն էիր կռւում. այսինքն քո և երկու աղջիկների»։

«Պոնէ դէպի ալդ աղջիկներն ուղղած սրերի հարուածները մարմնիզ վրայ էի ընդունում»։

«Եւ հէնց տեղն ու տեղը երկուսն էլ սիրահարուեցան քեզ վրայ։ Երկուսն էլ իրենց

սիրոյ նետերը դէպի քեզ ուղղեցին։ Ո՞հ, ես
գիտեմ այդ և այլս չեմ շարունակում հար-
ցեր տալ. այդպէս են կանալք. կարող են ու-
րիշ տեսակ լինել. միթէ Ալլահը նրանց այդ
կատարելագործութեամբ չստեղծեց։ Երկուսն
էլ սիրով բօրեռքուեցին այն ասպետի համար,
որ իրանց ներկայութեամբ նրանց համար
կուեց և յաղթեց. այդ օրը դու թէ տղա-
մարդկանց և թէ կանանց հաւասարապէս
յաղթեցիր։ Ասեմ՝ թէ յետոյ էլ ինչ պատա-
հեց։ Զեր զօրապետ Թովմասը դափնեալ պսակ
դըրեց գլխիդ և յալտնեց, որ քեզ ընդունում
է իւր որդու տեղ, իսկ դու պատասխանեցիր,
որ աւելի սիրով նրա եղածը որդին կլինիս։
Անհաւատները կարող են միայն մէկին սի-
րել. անհաւատի սրտում չեն կարող երկու
կանալք տեղ բռնել։ Դու մէրժեցիր զօրապե-
տի աղջկայ ձեռքը, բայց եղբօր աղջկաննէլ
չստացար։ Այդպէս չէր իրողութիւնը։

— «Ճիշտ գուշակեցիր», հառաչեց ասպետը
և գլուխը կախ ցցեց։

Կալէդը շարունակեց իր պատմութիւնը,
շեշտելով միմիայն գլխաւոր կէտերը. «Դուք
երկուսդ, որ սիրում էիք միմեանց, համա-
ձայնութիւն կայացըիք՝ դաղանի կերպով քաղա-
քից փախչելու։ Ո՞րքան պէտք է դուք ի-

րար ճանաչէիք, ո՞րքան պէտք է ձեր գաղ-
տնի դաշնակցութեամբ տոգորուած լինէիք,
որ մինչև անգամ ձեր ձիերը, որ նշանակեալ
ժամին պատնէշի առաջն էիք կանգնեցրել՝
միաբան էին միմեանց հետ։ Բախտը չյաջողեց
ձեզ. դու բռնուեցար, իսկ քո սիրելին ստի-
պուած եղաւ փախչելով որոնել իւր փրկու-
թիւնը։ Նրան թուլ տուփն պարսպի դռնից
ներս մտնելու. հաւանականաբար այնտեղ ճա-
նաչեցին, որ աղջիկ է։ Ամենքն իմացան, որ
հրամանատարի եղբօր աղջիկը կամեցել է գի-
շերով փախուստ տալ սլաշարուած քաղաքից։
Ի՞նչ կլինի ոք սիրուհու վիճակը։

Սապետ Եօնասը գլուխը կախեց և լոեց։
«Եթէ չես ուզում ասել, ես այդ էլ կգու-
շակեմ։ Եթէ փախչող կոյսը մի արաբացի
հրամանատարի աղջիկ լինէր, հայրն անմիջա-
պէս կսպանէր նրան և աշխարհիս վրայ մի կը-
տրուած ծաղիկ աւելի պակաս կլինէր, ուրիշ
ոչինչ. իսկ դու կարող էիր քեզ համար մի
ուրիշ ծաղիկ որոնել։ Բայց ձեր օրէնքով կինն
էլ հոգի է ընդունւում։ Այդ պատճառով քո
սիրուհուն չեն սպանի, բայց դրա փոխարէն
չորս մերկ սլաշերի մէջ կրանտարկեն, ուր
ոչ մի ուրախութիւն չկայ և որտեղից այլս անկարելի է աղատել նրան։ Գլուխդ չի վեր-

ցնի, որ նա այնտեղ թաղուած մնայ, որովհետեւ քեզ լաւ յայտնի կլինի, որ այդ հանգուցեալը նոյն իսկ գերեզմանի մէջ ապրում, վշտանում, հառաչում, ազատութեան է սպասում և որտեղ որ լինես, քնած թէ գուարճանալիս, նա քո մասին է մտածում, հիւծում, քեզ համար ողբում։ Ի՞նչ ես կարծում, լաւ կլինի այդպէս։

— «Ո՞չ», պատասխանեց Եօնաս ասպետը։

Արաբ հրամանատարը վեր թռաւ ուղտի մորթեայ գորգի վրայից, իւր ծանր ձեռքով բռնեց ասպետի ուսը և ասաց.

— «Ուրեմն հաւատդ դրժեցիր և յաղթուեցար»։

— «Դեռ ևս ոչ», պատասխանեց ասպետը։

— «Կատարելապէս յաղթուած ես, ինքո թւատարած ընկար իմ սրի վրայ և սուրսխորը խոցեց քո սիրտը։

Դու մոռացար հագնել զրահդ, ասպետ. Երբ, քո խօսքի համաձայն, փախաւ սիրուհիդ, դու կրկնակի կերպով իմ կալանաւորն հիդ, Եթէ դուք ջուխտդ միասին կալանաւորար։ Եթէ դուք ջուխտդ միասին լինէիք, Երկուսով միացած, ըուած իմ առաջը լինէիք, Երկուսով միացած, կարող էիք ինձ ծաղբել։ Ինչպէս դու, այնպէս էլ նա կարող էիք ծաղբելով Երեսիս առել. «մենք ոչնչից չենք վախենում. կամենաս»։

սպանել տուր մեզ, կամենաս չարչարիր, կամ մասմաս արա, մենք մարտիրոսներ կլինինք. միասին մեռնելը մեզ համար հոգեկան զուարձութիւն կլինի։ Ուրիշ ինչ ընտրութիւն կը մնար ինձ. կամ պէտք է ձեր արիւնով գետի հոսանքը կարմիր ներկել տայի կամ թէ պէտք է հրամայէի երկու ձի տալ ձեզ և ասէի. «փախէք, սիրեցէք միմեանց»։

1001
1598

Բայց այժմ դու մենակ ես կանգնած քո թշնամու առաջը, որի մարդկանցը սրի վէրքեր ես հասցըրել. բայց որովհետեւ ես յարգում եմ իմ քաջ թշնամուն, ուստի և բարեկամական ձեռքս դէսի քեզ եմ մեկնում։ Քո բարեկամները և հաւատակիցները, որոնց համար արիւնդ թափեցիր, իրենցից հեռացըրին քեզ, գլխիդ անէծքներ են թափում և քո վշտահար սիրուհուն իրանց ձեռքով մտրակում։ Եթէ երբ և իցէ դու համբուրել ես նրա սպիտակ ուսերը, դողալով պէտք է մտարերես այն մեխապատ մտրակների պատճառած սպիները, որ կմնան նրա ձիւնափայլ սպիտակ մտրմնի վրայ։ Եթէ երբ և իցէ ուրախացըրել է քեզ նրա քաղցը ժպիտը, դու պէտք է ատես այն սառը, անողորմ պարիսպները, որոնք նրան անջատում են քեզանից։ Եթէ դու նրան սիրում էիր և դեռ ևս սի



ըում ես, պէտք է սեղմես Կալէդի ձեռքը»:
 Ասպետ Եօնասի աչքերի առաջ սկսեց ա-
 մեն բան կարմրին տալ: Ամեն մի առարկայ
 արիւնոտ մէգով էր փաթաթուած թւում նը-
 րան: — Դառն ատելութիւնը, տանջուած սի-
 րոյ թմրութիւնը հետզհետէ սկսեց տիրանալ
 նրա սրտին: Երբեմն երբեմն նրա բորբոքուած
 նեարդերը ցնցւում էին սառը լիշողութիւնից:
 Նրան թւում էր, որ իբր թէ ի վաղուց հետէ
 չտեւնուած սրբերի և մարտիրոսների երկար
 ու անվերջ շարքերն անցնում էին նրա հո-
 գեոր աչքի առաջով, որոնց սկիզբն անլայտա-
 նում էր աստղերի մէջ, իսկ վերջը դեռ ևս
 հանդստանում գերեզմաններում: Նրան թր-
 ւում էր, որ իբր թէ լսում է հեռաւոր բարձ-
 րութիւնից եկող սաղմոսերգութեան հնչիւն-
 ները, որ իբր թէ մի անասելի ճաճանչով փայ-
 լող դէմք, փշեալ պսակը գլխին, ցած է իջ-
 նում անտեսանելի և անըմբոնելի բարձրու-
 թիւնից և նայում նրան. որ իբր թէ մի ա-
 րագասլաց ոլժ նրա ականջում փսփում է.
 «ամբողջ կեանքն իւր բոլոր զուարճութիւն-
 ներով յաւիտենականութեան մի վայրկեանն
 է ներկայացնում»:

Նա վարանման մէջ էր:
 Այդ վայրկեանին մի ձայն հնչեց նրա ա-

կանջին: Մի ձայն, որ հագիւ լիսուն տարուց
 ի վեր յալտնի էր Ասիայի գաշտավայրերում և
 որ Դամասկոսի անկումից յետոյ յաւիտեանս
 լուց. զանգակների զողանջիւնն էր այդ:

Դամասկոսի սուրբ Բարբարէ վանքի զան-
 գակն էր առաջին անգամ զողանջել արևելքի
 տուասպելներով տոգորուած մթնոլորտի մէջ
 և ամեն տեղ տարածուող հնչիւններով ցրուել
 արևելեան կրօնի աղօտ և դիւրայուղ առաս-
 պելական աշխարհի մառախուղը:

Ասպետ Եօնասը ծանր շնչելով լսեց այդ
 զողանջուող հնչիւնները և նրա դէմքը գու-
 նատուեց:

Կալէդը կնծիռները հաւաքած զննում էր
 վարանող Եօնասի դէմքը: Աջ ձեռքը դեռ ևս
 մեկնած էր սլահել, բայց ձախն արդէն բռնել
 էր իր սրի գաստակը:

Զանգակների զողանջիւնն երկրորդ անգամ
 լսուեց:

Եօնաս ամպետը դեռ ուշադրութեամբ
 ականջ էր զնում: Նրա ամբողջ հոգին թւում
 էր, թէ խօսում է այդ զանգի հնչիւնների
 հետ, ինչպէս այն լրաբերի, որ աներկբայելի
 կերպով ճշմարտութիւնն է յայտարարում:

Արդէն երրորդ անգամ լսուեց զանգի
 ձայնը:

Յանկարծ ասպետի գունատ ալտերը բոր-
բոքուեցին. արագ մօտեցաւ նա Կալէդին,
բռնեց նրա ձեռքը և սեղմեց ուժգին:

— «Ես քոնն եմ»:

Սուրբ Բարբարէ անուանուած վանքի
միակ զանգակը միայն այն ժամանակն էր
դողանջում, երբ մի կոյս աղջիկ յաւիտենական
կուսութեան խոստումն էր տալիս այնտեղ:
Իսկ երեք անգամ ընդհատումներով դողանջե-
լով յայտարարում էր աշխարհին, որ մենաս-
տան մտած կոյսն իշխանուհի է:

Այս բանն իմացաւ ասպետ Եօնասը զան-
գահարութիւնից—և վճռեց այսուհետեւ կո-
չուիլ ոչ թէ «ասպետ» Եօնաս, այլ Եօնաս
«բէգ»:

* * *

Եօնասին յաղթող և կալանաւորող արաբը
կոչւում էր Դերար. սա մի արկածախնդիր
մարդ էր, որի համարձակութիւնը յանդուգն
կատաղութեան էր հասնում և որի մակա-
նունն էր «պատերազմների խեղկատակ»:

Երբ Հերակլէս կայսրը վաթսուն հազար
զինավարժ զօրքով Այսնադենի մօտ երեաց՝
Դամասկոսը պաշարելուց ազատելու համար՝

զօրախաղի ժամանակ, զօրքի ընդհանուր հրա-
մանատար Վերդանը, որ նստած էր հարուստ
զարդարանքներով պատած ու ձիւնանման
սպիտակ ջորու վրայ, յանկարծ նկատեց, որ իր
փայլուն և շքեղ հետեւորդների մէջ մի օտա-
րական է խառնուել:

Այդ մարդու օտարական լինելն երևում
էր ոչ այնքան նրա հագուստից, այլ առաւել
ևս այն հանգամանքից, որ նա բոլորովին մերկ
էր: Միայն ազդրների վրայ վաթաթած ու-
նէր մի կարմիր շալ. նրա միակ զէնքը նի-
զակն էր:

Այս մարդը Դերարն էր:

Այդ կատաղի արկածախնդիրն ամբողջ զօր-
քի դիմացը թշնամու բանակն էր անցել ձիով
և երբ սկսել էին նրա վրայ ուշադրութիւն
դարձնել, նա այնքան էր մօտեցել հրամանա-
տարին, որ նիզակի մի հարուածով կարող էր
նրան ձիուց ցած գլորել:

— «Կենդանի բռնեցէք այդ յանդուգն
մարդուն», կանչեց Վերդանը իւր ուղեկիցնե-
րին և երեսուն զրահաւորուած հեծեալներ
իսկուն յարձակուեցին այդ մերկ մարդու վը-
լայ:

Բայց ով կարող էր կենդանի բռնել Դե-
րարին:

Երբ փալուն հեծեալները սրբնթաց առաջ էին արշաւում, Դերարն իւր առանց թամբի, սանձի և զէնքի թեթև ձիով սկսեց նըրանց առաջն ալս ու այն կողմն ընկնել. դէպի իրեն էր գրաւում նրանց աջ ու ձախ կողմից, թողնում էր, որ մօտենան, բայց մի ոստումով կրկին ամենից առաջ էր ընկնում, իրան հետեղներից մէկին թոյլ էր տալիս, որ բաւականաչափ մօտենայ իրեն և յետոյ, յանկարծ շուռ գալով, արագ հարուածով թամբից ցած գլորում նրան: Իսկ թշնամու հարուածներն աջ ու ձախ էին սահում, առանց նրան դիպչելու: Նա վահանով չէր պաշտպանում, այլ ձկան պէս դուրս էր սլքում նըրանց ձեռքից և ասեղի ծալրից խոյս տուող մի կաթիլ սնդիկի նման փախչում, այն ինչ նրա նիզակը միշտ հարուածում էր թշնամուն: Դերարն իւր ձիով անակընկալ կերպով մի կողմնակի թոյլցը էր անում և յետերից իւր նիզակի ծալրը մխում մօտովն անցնող հեծեալի ծոծրակը:

Երբեմն այնպէս էր ցոյց տալիս, իրը թէ ձիուց ցած է ընկնում, բայց երբ հալածող ները հասնում էին, նա իր ձիու կողքից քաշը ընկած՝ կտրում էր թշնամիների շարքը և փախչում: Տասնեեօթը հակառակորդի, քիչ թէ

շատ վիրաւորուած, ձիուց ցած գլորելուց յետով, երբ «պատերազմների խեղկատակը» իր ընկերների մօտ վերադարձաւ, նրանք հանգիստաւոր բացագանչութիւններով ընդունեցին նրան:

Երբ Կալէդն այդ յանդուգն ձեռնարկութեան համար խստօրէն հաշիւ պահանջեց նրանից, Դերարը պատասխանեց.

«Ես ուզում էի նոյն իսկ իմ անձի վրայ փորձել, թէ արգեօք ալսօր Ալլահը մի հրաշք կործէ մեզ համար: Նրանք էին ինձ հետ կուռում, ես միայն պաշտպանում էի»:

Եւ իսկապէս Ալլահը հրաշք գործեց նրանց համար, որովհետեւ այդ օրուայ երեկոյեան դէմ յունա-հռովմէական մեծ և ուժեղ զօրաբեանակը ցրուած փախուստ տուեց Այսնադէնի դաշտավայրով՝ հալածուած փոքրաթիւ թշնամուց և ամբողջ բանակը, դրօշները, զէնքերը և պաշարուած Դամասկոսն աւար թողեց թշնամու ձեռքը:

Այս միւսնոյն Դերարն էր, որ կալանաւորեց Եօնասին:

Երբ Կալէդն ուրացողին ներկայացրեց եր զօրավարներին, Դերարն առաջինն էր, որ ձեռքը մեկնեց նրան՝ չնայելով որ իւր աչքը դեռ ևս կապած էր այն զիշերային

կոռւի միջոցին՝ Եօնասից ստացած բռունցք-
ների հարուածներից:

Հարուածներ սուող այդ ձեռքն արժա-
նի էր, որ սեղմուէր մահմեղականի ձեռքով:

«Դալդ բարի, Եօնաս բէդ, ուրախ եմ,
որ չժողի քեզ Դամասկոսից փախչելու, քեզ-
նից մե շատ յաջող հարուած ստացայ և դրա
փոխարէնը սիրով կուզենալի հատուցանել քեզ:
Իմ ցանկացած հատուցումն այն կլինէր, որ
քեզ կրկին Դամասկոս տանէի և փախած
ուղեկցիդ յանձնէի: Քեզ յայտնի են այն գաղտ-
նի անցքերը, որոնք դէպի պաշարուած
քաղաքն են տանում և գիտես, թէ պարիսպ-
ների որ մասերն աւելի հեշտութեամբ կարե-
լի է կործանել:

«Այժմ ես քո տրամադրութեան ներքոյ
եմ. հետդ կգամ և, եթէ կամենաս, քեզ հետ
միասին կկոռւեմ»:

Եօնասը նոյնպէս սեղմեց սարակինոսի
ձեռքը:

Երկու այսպիսի ձեռների փոխադարձ սեղ-
մուիլը մեծ վտանգ էր սպառնում Դամա-
կոսին:

Որովհետև եթէ Եօնասը միտք ունենար
պաշարուած քաղաքի թոլլ կողմերը մատնե-
լու, Դերարն էլ արիութիւն կունենար այդ

հանգամանքից օգտուելու և թշնամու ոյժը
ոչնչացնելու:

Այդպէս էր ընկել Բօսրան Դամասկոսի
պաշարումից առաջ: Այդպէս էր Թօմանոսը
մատնել իւր հայրենի քաղաքի գաղտնի ստոր-
երկեայ ելումուտքը և նոյնպէս Դերարն էր
առաջնորդել հարիւր յանդուգն զինուորներին
դէպի քաղաքի պարիսպները՝ գիշերալին խա-
ւարի միջով:

Եօնաս բէգը գիշերալին յարձակումից յե-
տոյ՝ ժողովուած արաբ զօրավարների և իւր
հաւատակից կալանաւորների ներկայութեամբ
երդումով ուրացաւ քրիստոնէութիւնը:

Եօնաս Բէգը հերոս էր և դարձաւ մատ-
նիչ:

Նա դրժեց իւր հաւատը և երդուեց.

«Ես, Եօնաս Բէգս, ժխտում եմ ձեզ հետ
ունեցած իմ բոլոր կապերը թէ այս և թէ
միւս աշխարհում. ես ուրանում եմ խաչեցեա-
լին և նրա բոլոր պաշտողներին: Ես ընտրում
և ընդունում եմ Ալլահին՝ Տէր, Խոլամը՝ կրօն,
Մէկկան՝ սուրբ տաճար, մահմեղականներին՝
եղբայր և Մահմեղին՝ մարգարէ, որ ուղար-
կուեց մեզ ճշմարիտ ճանապարհի վրայ դնելու
և ճշմարիտ հաւատը բարձրացնելու՝ հակառակ

նոցա, որոնք բացի Աստծուց կուռքեր էլ են
պաշտոնմա:

Եւ այս բոլորը կատարուեց մի գունատ
աղջկայ սիրուն աչքերի համար:

Երբ Դամասկոսի զօրքի հրամանատարը
լսեց Եօնասի հաւատուրացութիւնը, գուշա-
կեց, որ իր քաղաքին էլ Բօսրայի ճակատա-
գիրն է սպասում՝ ստորերկրեալ անցքերի կող-
մից: Ուրացողն ամենավտանգաւոր թշնամին
է, որովհետև գիտէ իր դրժած հաւատակից-
ների գաղտնիքները:

Պէտք էր ճակատագրի առաջն առնել:
Այն գիշերը, երբ Եօնաս Բէգը Դամասկոսի
գոների առաջն եղած հրապարակի վրայ ուրա-
ցութեան բոլոր ձեւականութիւններն էր կա-
տարում, պաշարուած քաղաքի հրամանատար
թովմասը Դամասկոսը փայլուն կերպով լուսա-
ւորել տուեց: Աշտարակները և եկեղեցու բո-
լոր գմբէթները լուսաւորուած էին գունաւոր
Բէնգալիան կրակներով և քաղաքի «Կայցան»
գուան վրայ ծածանում էր մի հսկայական
խաչ, որի շուրջը խմբուած հոգեորականու-
թիւնը սրբազան երգեր էր հնչեցնում:

Այդ միջոցին թովմասը բանալ տուեց քա-
ղաքի գոները և լունական զօրքերի գլուխն

անցած՝ կէսգիշերային լուսաւորութեամբ յար-
ձակուեց թշնամու վրայ:

Սարակինոսների զօրքը նախապատրաս-
տուած էր այդ յարձակման համար և երկու
կողմն էլ հաւասար քաջութեամբ կուռում էր
պատերազմի դաշտում:

Սուր սրի դէմ էր հարուածում և կը-
ռուողներից ոչ մէկն առիթ չունէր իւր հա-
կառակորդից ամաշելու:

Գեներալ Թովմասը հոչակաւոր նետաձիգ
էր, նա իր ձիու հետ միասին պաշտպանուած
լինելով անթափանցելի զրահով, կոռի ամե-
նավտանգաւոր տեղն էր գտնւում և հանդի-
պած թշնամուն գետին գլորում: Հակառակոր-
դի ոչ ուժեղ ձեռքը և ոչ էլ յանդուգն արիու-
թիւնը չէր կարող օգնել, որովհետև յոյն հրա-
մանատարի նետը հեռուից արդէն թափան-
ցում էր նրա մարմնի մէջ: Եւ եթէ թշնամին
նոյն իսկ հսկալ լինէր, ամենաթոլ նետն ան-
գամ բաւական էր նրան միւս աշխարհն ու-
ղարկելու:

Ճակատամարտի կատաղի աղաղակների մի-
ջոցին «Կայցան» դուան վրայ ծածանուող խաչի
մօտից անդադար հնչւում էր սուրբ մարդ-
կանց և կոյսերի սրբազան երգերը՝ ի միիթա-
րութիւն հաւատացեալների և ի սարսափ թըշ-

Նամիների:

Կոիւը տեսց մինչև հետեւալ օրուայ

Ժամի 12 ը:

Կէսօրին Կալէդը նոր զօրքեր հանեց Թովմասի դէմ, բայց Եօնասին թոյլ չտուեց կը ռուին մասնակցելու: Նա գիտէր, որ ամենքը նրան էին որոնում և եթէ Եօնասը հարիւր կեանք ունենար, հարիւր նետ բոլորին էլ վերջ կդնէր: Կալէդը նրան մի ուրիշ յանձնարարութիւն պիտի անէր:

Նոր աւելացած զօրքերի առաջնորդն երիտասարդ և պատկառելի դիւցազն Աբան էր, որ բացի իւր գեղեցիկ, հաւատարիմ և արիասիրտ ամուսին Ալմիդայից ոչ մի կին չէր ճանաչում:

Ալմիդան արշաւում էր «սրբազն կրուի» ամեն մի ճակատամարտում իր ամուսնու կողքին: Աբանը ճանաչուած էր իբրև հմզւտնիզակ բանեցնող, իսկ Ալմիդան նրանից յետ չէր մնում իբրև քաջ նետաձիգ:

Այդ երկուսն էլ անմիջապէս յարձակուեցան գեներալ Թովմասի վրայ:

Աբանը կրում էր արծաթեալ զրահ և սաղավարտ, որից շղթաներ էին կախուած: Սրան միայն մի տեղից կարելի էր վիրաւորել, այն է զից, ուր վերջանում էր զրահը: Եւ

մի նետ նրա վզի հէնց այդտեղը հարուածեց և Աբանն անշնչացած ընկաւ ձիու վրայից:

Ալմիդան տեսաւ նետաձիգ թշնամուն, յետոյ ամուսնու դիակը գրեց իր ձիու վրայ, պատերազմի դաշտից դուրս տարաւ, լուաց, զգեստները հագցրեց իրենց վրանում, գրկեց, համբուրեց նրա սառը մարմինը և առանց մի կաթիլ արտասուք թափելու, առանց մի հառաջանք արձակելու, ասաց. «դու երջանիկ ես, սիրելիս, դու գնացիր այն Աստուծոյ մօտ, որ միացրեց և այժմ կրկին բաժանեց մեզ միմեանցից: Բայց ես վրէժդ կլուծեմ, որպէս զի ես էլ արժանի լինիմ գնալու այնտեղ, ուր դու գնացիր»:

Ապա կրկին վերադարձաւ կռուի դաշտը և առաջին արձակած նետով հարուածեց Թովմասի կողքին գնացող դրօշակակը ձեռքը:

Դրօշը վայր ընկաւ:

Յետոյ արձակեց երկրորդ նետը և հանեց Թովմասի մի աչքը:

Դամասկոսցիների զօրքի շարքերում ընդհանուր վայնասուն բարձրացաւ, երբ դրօշակակիրն ու հրամանատարն այդպէս մէկը միւսի յետեւից գետին գլորուեցին: Բայց մի վայրեանից յետոյ երկուսն էլ նորից վեր կացան:

Թովմասը կապել տուեց աչքը, ինքը բարձրացրեց դրօշը և վիրաւորուած՝ վերջին միգը թափելով յարձակուեց թշնամու վրայ և յետ մղեց նրան, մինչեւ որ Կալէդի պահեստի զօրքերն օգնութեան հասան։ Միայն վրայ հասնող գիշերը կռուին վերջ դրեց։

Կէս գիշերից մինչեւ հետեւեալ օրուայ երեկոն տեւող կատաղի կռուից յետոյ արաբացիները գնացին հանգստանալու։ Նրանք կարող էին անկասկած ենթադրել, որ յետ մը զուած թշնամին—ուժասպառ քըխտոնեաները և նրանց վիրաւորուած հրամանատարը նոյն պէս ուրախ պիտի լինէին գիշերուայ վրայ հասնելուն, որպէս զի վիրաւորուածների վէրքերը կապեն և զինուորների յոգնած մկանունքներին նոր ոյժ տան։

Կարծում էին, որ նրանք էլ կընեն։

Բայց յոյները չքննեցին։

Արաբացիների խորը քնի միջոցին, երբ ամեն մի մարդ մեռածի նման է լինում, յանկարծ հնչեց զանգակի ձայնը և պարզ երկնկար իսփած կայծակի նման՝ յունաց զօրքը յարձակուեց քնած սարակինոսների վրայ։

Այժմ նրանք, նախորդ գիշերուայ պէս, կռուի պատրաստի զօրքերի չէին սպասում։ Այժմ զրահը զրահի, հեծեալը հեծեալի դէմ

չէր կռւում, այլ խորը քնից արթնացած կիսամերկ արաբացիները խարխափում էին՝ ցըրուած զէնքերը գտնելու համար և ընկնում յոյն հեծելազօրքի ոտների տակ, մինչդեռ սարսափելի մանգաղաւոր կառքերն անգլուխ մնացած մարդկանց բազմութեան միջով անցնելով՝ արեան ծով գարձերին արաբացիների բանակը։ Երկսայրի սրերն էլ իրենց բանն էին տեսնում։

Այս պատերազմական խորամանկութիւնը ճակատագրական հետեւանք ունեցաւ սարակի։ նոսների համար։ Սրանց ամենալաւ զօրքերն առանց գիմագրութեան ընկան ընդհանուր կոտորածում։ Գեներալ Թովմասը սարսափելի կերպով տուժել տուեց իւր աչքի կորուստը։ Հազարաւոր զինուորների թարմ, կարմիր արիւնն այդ աչքի գինն էր։

«Ո՞վ Ալլահ, որ երբէք չես քնում», աղաղակում էր Կալէդը յուսահատուած, «անօգնական մի թողնի քնի մէջ յարձակման ենթարկուած քո ծառաներին»։

Միայն մի թեթև բրդեայ բաճկոն էլ ծածկում նրա մարմինը և միայն մի սուր էլ շարժւում նրա աջ ձեռքին, երբ Կալէդն իւր անթամբ ձիու վրայ նստած յարձակուեց կոտորածի ամենասարսափելի տեղը։ Նրան հե-

տեեցին միալն չորս հարիւրի չափ հեծեալ:
 Բայց այս փոքրիկ խմբի արած հրաշքները, Աստուծոյ սրի անյաղթելի ձեռքը վերջ դրեց լոյների առաջ խաղալուն և մինչդեռ փոքրիկ գունդը կուռում էր թշնամու ամբողջ բանակի հետ, իմաստուն Սըռւ Օքայդահը խառնաշփոթ զօրքերը կարգի բերեց, իսկ խեղագարի պէս ու դէն ընկնող Դերարը յարձակուղների շարքերը թափանցեց և կէս ժամից յետոյ պատերազմի բախտն արդէն փոխուած էր: Երբ բևեռային աստղը հորիզոնին հասաւ, յունաց զօրքը կըկին յետ էր մղուած Դամասկոսի պարիսպների շրջապատի մէջ Տիբալն ընկեցիկ մեքենաները պատմէշների վրայից ռումբեր էին արձակում լոյներին հալածող սարակինոսների վրայ:

Այս անյաջող փորձը պաշարուած քաղաքի վերջին ճիգն էր:

Թովմասի զօրքերի յաղթուիլը Դամասկոսի կործանումն էր նշանակում:

Երկար պաշտպանուելու համար այլեւ պաշար, իսկ արագ յաղթելու համար բաւականաշափ ուժեր չունէին:

Գեներալ Թովմասը գիտէր, որ այլ ևս մի օր չափտք է կորցնել, դաւաճան Եօ-

նասը, որ ուրացաւ իւր հալրենակիցներին, կարող էր մատնել և նրանց:

Նա ամենից եռանգով էր կռւում պարիսպների պաշտպանութեան համար և այդ պատճառով էլ նրան յայտնի էին պարիսպների ամենաթոյլ կողմերը: Հետեեալ գիշերը քաղաքի կողմից հաբիւր պատգամաւոր ամբողջ հոգեռականութեան հետ միտին, հանդիսաւոր արարողութեամբ և եկեղեցական ջահերի լուսով քաղաքի դռնից դուրս գալով՝ մտան սարակինոսների բանակը:

Ազատ երկնքի տակ եպիսկոպոսը մի կարճ աղօթք ասաց: — Այդ վերջին աղօթքն էր, որ մի քրիստոնեայ քահանայ վերառաքում էր Աստուծուն այդ վայրում:

Այս աղօթքով եպիսկոպոսն աղաչում էր Աստծուն, որ մեղմացնի վայրագ թշնամու սիրութ:

«Աստուծ, ամենակարող Աստուծ, աշխարհների ոգին, որ ուրախութեան և խաղաղութեան միջոցին կոիւ և պատերազմ է պատճառում և միայն նրա իմաստութիւնը գիտէ՛թէ ինչո՞ւ: Կարող է Սա իւր սեպհական սուրբ, «Աստուծոյ սուր» Կալէդին, որին ինքն է պողպատ դարձրել, կըակի մէջ ամրապնդել և արիւնով ներկել, կարող է նրան դիւրաբարոյ,

զի՞նող դարձնել, որպէս զի աղաւանքի և արտասուբի ազգեցութեամբ նրա սիրտը մեղմանայ:

Աստուած կարող է այդ անել:

Երբ պատգամաւորներն արտքացիների
բանակը հասան, Կալէդը, Աստուծոյ սուրը, ոչ
մի տեղ չերեաց:

Նրան չգտան. նա գաղտնատէս հեռացել
էր և ոչ ոքի չէր ասել իւր ուր լինելը. նրա
հետ միասին անյախտացել էին ուրացող Եօ-
նասը, Գանատիկոս Դերաբը, Վրէժինդիք Ալ-
մեդան, բոլորը—որոնք երգուել էին կոտորել
Դամասկոսի քրիստոնեաներին, որոնց սիրութ
քարացել էր վրէժինդրութիւնից, նախանձից,
հոչչակուելու ցանկութիւնից և որոնք միայն
արեան ծարակի էին: Այս չորս անձինքն անհե-
տացել էին արաբական բանակից և ոչ ոք տե-
ղեկութիւն չունէր նրանց մասին: Դրանց փո-
խարէն մնացել էր միայն հրամանատարի օգ-
նական բարեսիրտ Արու Օբայդահը, որ մաս-
նակցում էր Կալէդի արշաւանքին: Սա էլ մը-
նացել էր միմիայն նրա համար, որ Աստուծոյ
սրի հարուածած վէրքերը կապէ: Եթե պահա-
պաններն եպիսկոպոսին յայտնեցին Կալէդի
քացակալութիւնը և պատգամաւորներին տա-

բան Աքու Օքայդահի վրանը, եպիսկոպոսը թե-
թևացած սրտով արտասանեց.

«Աստուած լսեց մեր աղախանքը»:

Եւ իսկապէս, նրանց պաղատանքը լսելի
եղաւ:

— «Ի՞նչ էք ցանկանում, քրիստոնեաներ»,
Հարցրեց ծերունի Աբու Օբայդահն ալեղարդ
Եպիսկոպոսին:

— «Մեր ցանկութիւնն այն է, որ Աստու-
ծոյ կամքը կատարուի. Նրա կամքն էր, որ Դա-
մասկոսը ձեր ձեռքն ընկնի. մենք չենք կա-
րող Նրա ամենակարող կամքին հակառակել.
Քաղաքը ձեզ ենք լանձնում»:

— Ալլահը պահպանի ընկճուածներին. Ելիս էք կամենում մեզնից:

--«Ինչ որ դու կտաս մեզ»:

«Ահա մագաղաթը, գրագիրը թող նշանակի. եթէ դու իմ ասածների դէմ բան ունենաս ասելու, գլխով նշան արա և ես ուրիշ տեսակ գրել կտամ»:

Եպիսկոպոսը համաձայնութեան նշան
արտայալտեց: «Ուրեմն այս վայրկեանից սկսած
գաղաքառում են բոլոր թշնամական յարաբե-
րութիւնները Դամասկոսի բնակիչների և պա-
շարող զօրքի մէջ»:

Եպիսկոպոսը համաձայնուեց։

— «Կայցան գուռը հոգեորականների ձեռով պէտք է բացուի և արաբացի զօրքերի պահպանութեան լանձնուի»:

— «Դամասկոսում ապրող քըլստոնեաներին կըօնի ազատութիւն պէտք է տրուի և ոչ ոք չպէտք է ստիպէ նրանց դրժել իրանց հաւատը: Բնակիչներից իւրաքանչիւրը թող սեպհականէ այն հողն ու տեղը, որին տիրել էր մինչև այսօր և բացի Խալիֆին տրուելիք համեմատական հարկից, ոչ ոք իրաւունք չպէտք է ունենալ մաքս կամ տուրք նշանակել»:

Եպիսկոպոսը գլխով արեց՝ ի նշան համաձայնութեան:

— «Դուք կարող եք անարգել յաճախել ձեր եօթն եկեղեցիները»:

Եպիսկոպոսի աչքերն արտասուքով լը. ցուեցան:

— «Դուկ նրանք, որոնք չեն կամենալ Խալիֆի եշխանութեանը հապտակել ու կցանկանան տուն և հայրենիք թողնելով առաւելութիւն տալ անորոշ վիճակին և պատուաւոր աղքատութեան, կամ թէ չեն կարող յազդող թշնամու ներկայութեամբ այստեղ ապրել— կարող են ազատ կերպով հեռանալ այստեղից»:

Եպիսկոպոսը հեկեկաց. ինքն էլ այդպէտիների թուին էր պատկանում:

— «Քոլոր իրենց զէնքերով, ձիերով և զրօշներով»:

Այս արդէն Դամասկոսիների սպասածից աւելի էր:

— «Եւ իրանց կայքից ու կաշուածքից կարող են նրանք այնքան վերջնել, որչափ կարող են հետները տանել»:

Պատգամաւորները համբուրեցին ծերունի թշնամու ձեռքը:

— «Դո՞հ էք իմ պայմաններից»:

— «Միթէ կարող էինք աւելի պահանջել»:

— «Ուրեմն այս դաշնադրութիւնը ստորագրենք և կնքենք մեր կնիքներով, որպէս զի հաստատուի»:

Այս վաւերաթուղթը տեղն ու տեղը ստորագրուեց, կնքուեց և յոյներն ու սարակինուները դաշնադրութեան մի մի օրինակ վերըրին:

— «Այժմ փոխադարձ պատանդներ տանք միմեանց, որպէս զի մեզնից ոչ մէկը դաշնադրութիւնը չխախտէ: Զեզնից ով է կամենում իրու պատանդ մնալ այստեղ»:

— «Ես ինքս կմնամ», ասաց ծերունի եպիսկոպոսը:

— «Այդ դէպքում ես էլ, իբրև պատանդ,

կերթամ ձեզ մօտ», ասաց Աբու Օբայդահը և
մինչ գեռ եպիսկոպոսն իւր երեք ընկերներով
հրամանատարի վրունում մնաց, Աբու Օբայ-
դահն երեք իմամների և Դամասկոսի պատ-
գամաւորների հետ անձամբ գնաց քաղաք՝
ձիթենու ճիւղը ձեռքին բռնած:

Բայց որտեղ էր Կալէդը խաղաղութեան
լաշնարութիւնը կապելու միջոցին: Աստու-
ծոյ սուրն ուր էր անյատացել երկրի երե-
սից, երբ գիշերային մթութեան մէջ խաղա-
ղութեան ձիթենու ճիւղն էր ծագկում:

Կալէդն այդ միջոցին ճիշտ որ երկրի ե-
րեսին չէր գտնուում, այլ գետնի տակ. նրա-
հետ էին և քրիստոնեաների ամենասարսա-
փելի թշնամիները, Դերաբը և ուրացող Եօ-
նասը:

Եօնասը մատնել էր նրանց այն գաղտնի
ստորերկրեալ անցքը, որ պարիսպների տակից
սկսուելով հասնում էր մինչև աշտարակի գետ-
նափոր կամարների տակ:

Մի քանի հարիւր մերկացրած սրերով
զինուած արիասիրտ սարակինոսներ հետները
վերցրած՝ անցան նրանք ստորերկրեալ ճանա-
պարհը և գիշերուայ խաղաղութեան միջոցին
յարձակուեցին աշտարակի քնած պահապան-
ների վրայ. կոտորեցին բոլոր դիմադրողներին

և յետոյ պարսպի գոները բաց արին գուրսը
թագնուած սարակինոսների գնդերի առաջ:
Որովհետեւ կռուողները լոգնել էին և քաղաքն
էլ անձնատուր էր եղել, ընդհանուր հանգըս-
տութիւն էր տիրում քաղաքում: Ալևս ոչ
ոք չէր սպասում, որ կոիւը շարունակուի. պա-
շարուածները պաշարողներին հնագանդութիւն
առաջարկելով՝ այլ ևս զէնքը ձեռին չէին հըս-
կում: Ընկեցները քնած էին իրենց քալընկեց
մեքենաների մօտ և պատերազմող քաղաքա-
ցին, որ թշնամուն սարսափեցնելու համար,
իւր կնոջ հետ միասին, զինուորի զգեստ հա-
գած պատնէշների վրայ էր կանգնած՝ խաղա-
ղութեան յայտարարութիւնից յետոյ վերադար-
ձաւ տուն, հանեց զինուորական զգեստը և
հանգստացաւ իւր՝ կնոջ կողքին:

Այս խորը քնի միջոցին էր, որ Կալէդն
իւր արիւնարբու գնդերի հետ ոտք կոխեց Դա-
մակոսի փողոցները:

Սկզբի երկիւղի միջոցին քաղաքի փողոց-
ները լցուեցան փախչող ամբոխով. անզէն և
մերկ մարդիկ վագում էին դէպի վաճառա-
նոցի հրապարակը. իսկ յոյն զօրքերի դեռ ևս
զինուած գնդերի մէջ էլ սարսափ էր տիրում:

Ներս խոնուող արաբացի պատերազմող-
ների ճանապարհը ոչ ոք չէր խափանում:

Ով կամենար սպանել, կարող էր սպանել:
Ով կամենար յափշտակել, կարող էր յա-
փշտակել. իսկ ընդհանուր հրդեհը յետաձգեցին,
որ վերջն անեն:

Եօնաս բէգը Կալէդի զօրքերն առաջնոր-
դեց դէպի մենաստանը:

Այն սարսափը, որ ամբոխին դէպի փո-
ղոցներն էր առաջ մղում, այն կոյլ յուսահա-
տութիւնը, որով անզէն մարդիկ իրենց մերկ
մարմիններով ուղում էին զինուած յարձա-
կուոզների առաջն առնել, բազմաթիւ համար-
ձակ մարդկանց կատաղի գիմադրութիւնը,
ձիաւորի ասպանդակներին փաթաթուող մայ-
րերի խելագար աղաղակները — այս բոլորն ա-
պացուց էր, որ Եօնաս բէգը ճիշտ նպատա-
կին էր դիմում:

Մենաստանը քաղաքի գանձարանն էր.
այգտեղ էր ժողովուած բոլոր ոսկին և թան-
կագին քարերը և — որ ամենից թանկագինն
էր — այգտեղ էին գտնուում քաղաքի կոյս աղ-
ջիկները, որոնց մէջ էր նաև Եւգոկսիան:

Ամենքին յալտնի էր, որ այդ մենաստա-
նին տիրելու համար մի կատաղի, յուսահատ
կոիւ պիտի տեղի ունենար:

Եօնասն իւր հալրենակիցների արեան

միջովն այնպէս էր քայլում, որ կարծես լճա-
կի տղմի միջովն անցնելիս լինէր:

Իւր սրով ճեղքած գլուխներից շատերին
անձամբ ճանաչում էր. շատերը նրա սրի հա-
րուածն ընդունելուց յետով նրա անունն էին
տալիս, բայց Եօնասը ոչ ոքին չէր խնայում:
Նրա հոգեկան աչքերի առաջ միայն Եւգոկ-
սիալի պատկերն էր նկարուում:

Կալէդը չէր կարողանում առաջ գնացող-
ներին հասնել, Դերաբը նոյնպէս յետ էր մը-
նում նրանցից: Եօնասը միշտ իւր խմբից նի-
զակ ձգելու տալածութեան չափ տեղ առաջ
էր գնում. նա էր ամենքի համար ճանապարհ
հարթում, նա էր մահաբեր սուրբ հետզիւտէ
աւելի խորը թափանցում իւր հալրենիքի սիր-
ուը, մինչև որ վերջապէս նրա սրի ծայրն
եկեղեցու դռանը գէմ առաւ:

Ամենքը, որոնք մենաստանի գոներն ու-
զում էին պաշտպանել, թէ երիտասարդ, թէ
ծեր, թէ ծանօթ և թէ զինակից, մէկը միւսի
յետեւից ընկան Եօնասի սրի հարուածներից.
Նրա սուրբ կարծես թէ հմայուած էր. նրա
ամեն մի հարուածը նպատակին էր հաս-
նում:

Եօնասն արբել էր իւր հալրենակիցների
արիւնով. նա մոլեգնել էր: «Եթէ Աստուած

նոյն իսկ իւր հրեշտակներից մեկին ցած ուղարկէ այս գոները պահպանելու, ես դարձեալ կխորտակեմ», աղաղակեց նա պարծանքով և իւր երկաթի ձեռքով դռան փականքը բռնեց, ցնցեց, դուրս գջլեց և բացեց, բայց ապշած երերաց շէմքի վրայ: Ո՞չ թէ Աստծու հրեշտակապետն էր կանգնած նրա առաջ, այլ Աբու-Օբայդահը — մեծ վեզիրը:

— «Ժպիրհ», աղաղակեց մեծ զօրավարը, «ինչպէս ես համարձակւում զէնքը ձեռքիդ յարձակուել մի քաղաքի վրայ, որ արդէն Ալլահի մարգարէների պահպանութեան ներքոյ է գտնւում: Քո գլխին գայ այն արիւնը, որ դու թափեցիր այս խաղաղութեան գիշերը և դու էլ ընկղմուես այդ արեան մէջ»:

Այս խօսքերը լսելով Եօնաս Բէգը գըլխին փայտի հարուած ստացողի պէս ծունկ չոքեց և անզգայ ընկաւ մենաստանի գոների առաջ:

Մենաստանում հնչեց ութ հարիւր լիսուն կուսերի ջերմեռանդ երգեցողութիւնը՝ նման միւս աշխարհից հնչող ներդաշնակութեան, որ երկինքը խնդրում է՝ այս աշխարհում կատարուած սարսափելի գործերը ներելու համար:

Այդ միջոցին վրայ հասաւ և Կալէդը:

Արիւն էր կաժում նրա սրից ու թեերից, արիւն հոսեց նաև նրա բերանից, երբ տեսաւ Աբու-Օբայդահին, ստորագրուած դաշնադրութիւնը ձեռքին:

«Ողորմութեան չեն արժանանալ Ալլահի թշնամիները», կատաղած և փրփուրը բերանին գոռում էր նա «մահ այն ամենին, որոնց երակներում արիւն է հոսում»:

«Զափաւորիր եռանդդ, Կալէդ», ասաց ժիր հրամանատարը, «արիւն թափելու ժամերն արդէն անցել են, այժմ խաղաղութիւնն է տիրում: Ալլահը քաղաքը մեր ձեռ քը մատնեց և հաւատացեալներին ազատեց կոռուի հոգսերից»:

«Այդ ճիշտ չէ, ճիշտ չէ», կատաղած գոռում էր հրէշը: «Ալլահը նրա արիւնն ինձ տուեց: Ես յարձակումով վերցրի քաղաքը և սուրը ձեռիս անցայ քաղաքի գոներով»:

«Իսկ ես քեզնից առաջ եկայ ստորագրուած դաշնադրութիւնը ձեռքիս, ինքնակամ կերպով բացուած գոներով»:

«Մի հակառակիր ինձ, ես կսպանեմ նըրան, ով կհամարձակուի իմ առաջը կտրել և անհաւատներին պաշտպանել»:

«Եթէ այդպէս է, առաջ ուրեմն խրիր սուրդ այս դաշնադրութեան մէջ, որի վրայ

գրուած է Աստուծոյ անունը», ասաց Աբու-
Օբայդահը և երկու ձեռքով բռնեց նրա ա-
ռաջ լայն մագաղաթը, որի վրայ ամենից վե-
րեք ոսկի տառերով փալում էր Աստուծոյ
անունը:

Կալէդը տեսնելով այդ հակառակութիւ-
նը, ձեռքի սուրը կատաղութեամբ ուժգին
կերպով խփեց հատաքարի սիւներին:

Մենաստանի գոնով գուրս եկան տաս-
ներկու իմամներ, զրջապատեցին Կալէդին ու
Աբու-Օբայդահին և աշխատում էին հանգս-
տացնել աղմկարար պատերազմողներին մեղ-
մացուցիչ խօսքերով:

«Թող մարգարէն իւր բոլոր վրէժին-
դրութեան հրեշտակներով լարձակուի քո անի-
ծեալ լոյների վրայ>, անիծում էր Աստուծոյ
սուրը: «Այստեղ խաղաղութեան դաշնադրու-
թիւն են կապում ձախ ձեռքով, մինչդեռ
աջով թշնամու բողազներն են կտրում: Ցոյց
տուր դաշնադրութիւնը. կամենամ՝ կկատա-
րեմ, չեմ կամենայ՝ չեմ կատարի»:

«Ալլահն է պահպանում ինձ էլ, քեզ էլ,
թշնամուն էլ և եթէ նա չկամենայ, ամեն
մէկս շան նման կսատկենք: Ես խաղաղու-
թեան դաշն կապեցի, դու չես կարող քան-
դել»:

«Լաւ, ասաց Կալէդը և իւր սուրը միեց
պատեանի մէջ: Ես ալլես չեմ կռուի, բայց
փորձիր կանգնեցնել փողոցներում ցրուած
լարձակումն գործողներին, փորձիր համո-
գելու նրանց, որ չսպանեն և չլափշտակեն»:

«Այդ արդէն արել եմ», ասաց Աբու-Օբայ-
դահն անդրդուելի հանգստութեամբ»:

«Երկրորդ գոնով, որ այս գիշեր յանձ-
նուեց մեզ, մեր անձնապահ գունդը գնաց քա-
ղաքը ալաշտպանելու և այդ վայրկեանից ա-
մեն մի փողոցում քո խմբերը կըպատահեն
նոյնիսկ մեր զօրքերին, որոնք նրանց կռուից
յետ կկանգնեցնեն»:

Կալէդը չէր ուզում իւր ընկերոջ խօսքե-
րին հաւստալ, բայց այդ միջոցին վաճառա-
նոցի կողմից աղմուկով եկող արաբացիների
խումբը լուր բերեց՝ թէ ալլես անկարելի է
առաջ գնալ, որովհետեւ բոլոր փողոցները բըռ-
նուած են Աբու-Օբայդահի թիկնապահներով:

«Տես, Կալէդ», ասաց ծերունին հանգար-
տութեամբ, «Եթէ դու Ալլահի սուրն ես, ես
էլ Ալլահի Վահանն եմ և զուր տեղը կկռուես-
նըս գէմ, դու կարող ես միայն մի անյաշող
հարուած տալ, բայց Վահանը ծակել չես կա-
րող»:

Կալէդը դարձեալ հանգստացաւ և խելքը

գլուխն եկաւ. այդպիսի վայրկեաններումն էր
նա իւր չարանիւթ ծրագրները կազմում:

«Ե՛կ, գնանք վանքի բակը, թող մեր մար-
դիկը վկայ չլինին մեր անմիաբանութեան»:
Կալէդը, Աբու-Օբայդահը և իմամներն
անմիջապէս ներս մտան բայ դռնով:

«Խնդրեմ կարդա դաշնադրութիւնը», ա-
սաց այստեղ Կալէդն իւր ընկերակցին:

«Խնձնից հեռու կանգնիր և այդ թուղթն
ինձ չտաս կարդալու, որովհետեւ կարող է պա-
տահել, որ պատառեմ ու այդպիսով խայտա-
ռակեմ թէ ինձ և թէ քեզ: Կարդա, լուս
եմ: Ես կարծում եմ, որ դու լաւ պայմաններ
առաջարկած կլինես և չեմ սիալուի, եթէ ա-
սեմ, որ մկներին ազատ թողնելուց առաջ՝
նրանց ատամները հանած կլինես»:

Աբու-Օբայդահն սկսեց առանձին առան-
ձին կէտերը կարդալ:

Կալէդի կատաղութիւնն աւելի ու աւելի
սաստկանում էր:

Ամեն մի առանձին կէտը կարդալիս նա
այնպիսի բարձր ձայնով էր սկսում ծիծաղել,
որ նրա ծիծաղի ձայնն եկեղեցու ներսը թա-
փանցելով՝ խառնւում էր կոյսերի սրբազան
երգեցողութեան հետ:

«Այդ էլ, հող ու երկիր էլ պիտի ունե-

նան: Այդ անհաւատները, ապստամբները գեռ
էլի 7-ը եկեղեցի պիտի ունենան, ուր կարող
պիտի լինին Ալլահին անիծել. Օբայդահ, գու-
խելագարուել էիր, ինչ է. գիշեր էր և գու-
քնից զարթելով՝ երեւի չես իմացել, թէ ինչ
ես ստորագրելու...»

Ամենից լաւը հետևեալն էր:

«Եւ ով որ չի կամենալ քաղաքում մնալ,
կարող է անարգել իւր հարստութեամբ, ձիե-
րով և զէնքերով գնալ»:

Կալէդը կատաղի վագրի նման յարձա-
կուեց վաւերագրի վրայ և անպատճառ կպա-
տառութէր այդ, եթէ իմամներն այս ու այն
կողմից նրա վրայ թափուելով՝ յետ չմղէին
նրան:

«Թող Ալլահի կալծակները շանթեն ինձ,
եթէ ես համաձայնեմ, սպիտակամորուս ծեր
խենթ, ուզում ես երեսիս թքել. Ես յաղթեմ
թշնամուն և դու թոյլ տաս, որ նա իւր
զէնքերով քաղաքից դուրս գնայ, այն էլ զէն-
քերը, ձիերը և դանձերն ու դրօշը հետը
տանելնվ»:

Աբու Օբայդահը հանդարտ ծալեց թուղ-
թը և գօտիի մէջ դրեց:

«Ինչ որ ես զրել եմ, գրուած է. ինչ
որ ասել եմ, կկատարեմ»:

Ծերունի զօրավարի այս վեհ վարմունքը բարձրացրեց նրան բիրտ պատերազմող Կալէդից. այս իմաստուն և հանգարտ մարդու առաջ Կալէդը ստորացաւ իբրև մի սովորական աւազակ: Եւ նա այս բանը շատ լաւ էր զգում:

Երբ Կալէդը հասկացաւ, որ իւր կատաղութեամբ ոչինչ չի կարող անել, այլ միայն իւր հեղինակութեանը կվնտսէ, դադարեց զայրանալուց, բայց իւր բարկութիւնը թափեց՝ քրթմնջալով չնչին բաների մասին:

«Լաւ, ուրեմն ինչ որ գրուած է, գրուած է. անհաւատները կարող են քաղաքից դուրս գնալ դէպի դաշտավայրը: Դաշնադրութեան մէջ ասուած է. «իւրաքանչիւր ոք կարող է իւր զէնքերը հետը վերցնել, ես թոյլ կտամ միայն մի զէնք վերցնել, մի նետ, մի սուր կամ մի տէգ. ով ինչ ուզում է, թոյլ այն ընտրէ:»

Աբու Օբայդահն ուսերը շարժեց. — «թողքու ասածը լինի, եթէ այդպէս ես ցանկանում»:

«Նրանք միայն Դամասկոսի սահմանից կարող են ազատ դուրս գնալ — յետոյ արդէն իմ գործը կը լինի, թէ ի՞նչպէս կհասնեմ նըրանց յետևից»: — Այդ բանը մեծ աշխատանք

կպատճառէ քեզ. եթէ համբերութիւն ունենալիք մինչեւ վերջը լսելու, կիմանալիք, որ դաշնագիրը հեռացողներին իրաւունք է տալիս երեք օր առաջ գնալու և այդ երեք օրուայ ընթացքում մեզնից ոչ ոք իրաւունք չունի նրանց հալածելու»:

Քիչ էր մնում, որ Կալէդը կատաղութիւնից լաց լինէր:

«Իսկապէս դու շատ լաւ ես հոգացել նըրանց համար, Օբայդահ. ամեն բարիքով լցրել ես դրանց. բազմաթիւ քաջ և հաւատացող մուսուլմաններին նրանք ժամանակից առաջ դրախտն են ուզարկել և Մահմեդը նրանց երջանիկ ճանապարհորդութեան համար այնքան չէ հոգացել, որքան դու՝ նրանց սպանողների համար:

Դարձեալ մի բան. քո դաշնագրի մէջ գրուած է, որ նրանք կարող են իրենց գանձերը հետները վերցնել. ոսկի, պատուական քարեր, մարդարիտ և թանկագին զգեստներ ալնքան, որքան որ կարող են հետները տանել: Բայց թող անիծուած լինի բերանս դրած ամեն մի պատառը, եթէ ես թոյլ տամ նրանց, որ մի փշրանք հաց գոնէ հետները վերցնեն, որովհետև դաշնագրի մէջ ալդ մասին ոչինչ չէ ասուած:»

Այս խօսքերն ասելու ժամանակ Կալէդը հեգնութեամբ ծիծաղեց, բայց Աբու Օբայդահի վրայ ոչ մի փոփոխութիւն չարտայալտուեց:

«Դու սխալում ես, Կալէդ. մարդարէի պատմութեան մէջ գրուած է, որ ելք Մահմեդին իրեն հալածողների ձեռքից փախչում էր, մի այրի կին անապատում տուեց նրան իր ունեցած վերջին պատառը և այս հացի կտորը Մահմեդի սմենամեծ դանձն էր բոլոր երկրաշին ստացուածքների մէջ։ Ուրեմն հացն էլ մի դանձ է — ալդպէս է գրուած»։

Կալէդի դէմքն ալլալում էր կատաղութիւնից։

«Այնուամենայնիւ ես կոչնչացնեմ նրանց, մըթմըթաց Կալէդը՝ բարկութիւնից խեղդուած ձայնով և հեռացաւ Աբու Օբայդահից։

«Վանքի կոյսերի երգեցողութիւնը հետեւալ վարկեանին փոխուեց՝ Ս.ստուծոյ մեծութիւնը և սմենակարողութիւնը փառաբանող մաղթանքի։

Ալդպիսով Դամասկոսն աւերումից ազատուեց։

Դամասկոսի բնակիչներն ազատուած էին։ Ով կամենար ասլրել, կարող էր ասլրել և իր կեանքը վայելել։

Բայց այն քաջերը, որ պաշտպանել էին Պամասկոսի պարիսպները, այն կանայք, որոնց ամուսինները քաղաքի համար կռուելով մահացել էին, այն կոյսերը, որ իրենց նուիրել էին Ս.ստուծուն — սոքա բոլորն ազատութեան թշուառութիւնը գերադասեցին ստրկութեան բարեկեցութիւնից։

Քաղաքի առաջն եղող ազատ գաշտի վըրայ հաւաքուեցան, վերջին դրօշի տակ, այն փոքրաթիւ հաւատարիմները, որոնք ցայժմեան հրամանատար Թովմասի հետ էին մնացել՝ այն հոգեսորականների, պատօւաւոր քաղաքացիների, կանանց, երեխալոց և վանքի կոյսերի հետ, որոնք ցանկանում էին նրանց հետ գնալ։

Աբու Օբայդահի թիկնապահները բաժանում էին նրանց սարակինոսների մնացած զօրքից։ Նրանք ձի հեծան և որբազան երգեր հընչեցնելով՝ իրենց հայրենի քաղաքին հրաժեշտ տուին։

Ուրացողը տեսաւ նրանց իր մօտով անցնելը. սա նկատեց, որ հպարտ վճռական հայեացքները համարձակ իրան էին նալում և լաղթուածների այս տեսարանը սարսուռ էր ազգում նրտ վրայ։

Դրանց հետեւեց վանքի կոյսերի երկար

շարքը, որ սպիտակ հագնուած, արմաւենու ճիւղերը ձեռքերին, ջորիների վրայ նստած, երգելով անցնում էին:

Այդ երգն ուրացողի սիրտը դող գցեց, բայց երբ նա կոյսերի մէջ նկատեց իւր սիրեցեալի դէմքը, նրա կիրքը բորբոքուեց և խըզմտանքի ձայնը լռեց:

«Եւդոկսիա», աղաղակեց նա վշտալի և յուզուած ձայնով:

Կոյսն իւր աղօթազրքից չհեռացրեց հայեացքը:

«Եւդոկսիա, ես այստեղ եմ, Եօնասը»:

Կոյսն անցաւ նրա մօտով առանց մի հայեացքի արժանացնելու նրան:

Ուրացողի աչքերից արտասուքներ ցայտեցին. այս արտասուքը կատաղութեան և ցաւի արիւնն էր:

Եւդոկսիան պէտք է լինէր այն վարձատրութիւնը, որի համար նա իւր հաւատն ուրացաւ. այն մըցանակը, որի համար հայրենիքին դաւաճանեց և որի պատճառով իր եղբայրների արիւնի մէջ լողաց, բայց այժմ, այն վայրկեանին, երբ արգէն յաղթանակն իրենն է՝ տեսնում է Եւդոկսիային իր առաջովն անցնելիս՝ նման այն երազային պատկերին, որին

ասում ենք. «այժմ դու իմն ես» և իսկոյն քնից զարթում:

Կալէդը նկատեց Եօնասի արզունքը:

«Դու լալիս ես», ասաց նրան, «լաց եղիր, այդ շատ լաւ է քեզ համար»:

Քաղաքից գնացող քրիստոնեաների երգը հնչում է դեռ հեռութից. Եօնաս Բէգը նայում էր նրանց աշտարակի ծալրից, քանի որ երեւում էին, իսկ երբ անյայտացան նրա աչքից, նրա արտասուքը դեռ չէր ցամաքել:

«Լաց եղիր, այդ շատ լաւ է», ասաց Կալէդը, երբ պատահեց նրան:

Հետեւեալ օրն էլ Կալէդը Եօնասին տարաւ պարիսպների ծալրը, որտեղից նա արտասուալի աչքերով դէպի այն կողմն էր նայում, որ կողմից անյայտացել էր իւր սիրելին:

Դեռ այսօր էլ կարող ես լալ, նկատեց Կալէդը: Երրորդ օրը նոյնպէս Կալէդը հաճութիւն տուեց իւր ընկերոց վշտին, բայց չորրորդ օրուայ տուաւոտը կանուխ գօրքը զէնքի կանչելու աղմկարար նշանը տուեց և իմացը Ելու-Օբայդահին, որ ինքը մտադիր է չորս հազար հեծեալներով փախստականների լետեկից ընկնել:

Ծերունի զօրավարը գլուխը շարժեց:

Դու երեխայ չես, Կալէդ, որ երեակա-
լութեանդ ետեից ընկնելով՝ արել հորիզօնից
ցած բերես: Դու գիտես, որ փախստական-
ներն երեք օրուայ ճանապարհ առաջ են գնա-
ցել և դու որքան արագ էլ նրանց յետեւից
ընկնես, նրանք էլ առ սակաւն նոյնպիսի ա-
րագութեամբ առաջ կերթան: Անկարելի է,
որ կարողանաս նրանց հասնել: Նոյն իսկ
նրանց հետքն անգամ գժուարութեամբ կը-
գտնես: Լիբանանի անտառը մտնելիս՝ կկոր-
ցնես նրանց հետքը և ստիպուած կլինիս ան-
յայտութեան մէջ թափառելու և երբ վերջա-
պէս հանդիպես նրանց, նրանք կապաւինեն
մեր թշնամու քաղաքներից մինը, որի գոնե-
րը դու միայն արտաքուստ կդիտես և դեռ
ուրախ էլ կլինես, եթէ մի որեւէ կերպով
կարողանաս ազատուել ամեն կողմից քեզ վրայ
թափուող թշնամու բաղմութիւնից:

«Անհոգ եղէք», պատասխանեց Կալէդը,
«խօսքս խօսք է, իսկ խոստացածս ես միշտ
կատարում եմ: Դու խոստացար անհաւատ-
ներին ազատել և խօսքդ կատարելով ազա-
տեցիր նրանց: Ես էլ ուխտեցի նրանց ջնջել
և նոյնպէս կկատարեմ խօսքս»:

Այդ ասելուց յետոյ՝ Դերարին կանչեց
իր մօտ և ասաց. «ընտրիր մեր հեծելազօր-

քից չորս հազար մարդ, որոնք յալտնի են իբ-
րև ամենահամարձակներ, կոռովի մէջ ամե-
նաաներկիւղներ, աշխատանքի ու շանքի վե-
րաբերմամբ ամենատոկուններ և ամենից շատ
սովին դիմացողներ: Իւրաքանչիւրը թող վերց-
նի մի սուր, մի նիզակ և մի քսակ ոլոռ,
որ ճանապարհին շքաղցի: Ես ինքս էլ կգամ
ձեզ հետ, իբրև հասարակ զինուոր, որովհե-
տե այս անգամ Եօնաս բէգը կլինի մեր ա-
ռաջնորդը: Մենք փախստականների յետեւից
կընկնենք»:

Դերարը նոյնպէս գլուխը շարժեց:

«Գուցէ կատածումես»:

— Այդ անկարելի է:

«Դու էլ ես ասում, որ այդ անկարելի է»:

— Յոյներն արդէն ծովափ կլինին հասած:

«Ծովի վրայ նոյնպէս կհալածենք նրանց»:

— «Զի՞նվ»:

— Այս ձիով: Եօնասին ուղարկիր ինձ
մօտ:

Եօնասը ներկայացաւ խորհրդին:

«Եօնաս բէգ, այսօր էլ էիր նախում գէ-
պի այն կողմը, ուր երկինքն ու գետինը միա-
խառնուում են»:

— Այո՛:

«Այսօր էլ տեսա՞ր այն դէմքը, որ աչքից

անյայտացաւ, բայց այնուամենայնիւ սաւառնում է հոգուդ առաջ»:

— Այն, տեսալ:

«Երեք օր ու գիշեր է արդէն, որ նա անրայտացել է քո աչքից. կարող ես դեռ հասնել նրան»:

— Առանց մի որ և է կասկածի:

«Եթէ այդպէս է, հեծիր ձիդ և առաջնորդիր մեզ»:

Չորս հազար տրաբացի հեծեալները քրիստոնեաների զգեստներ էին հագել. — Ալդակէս էին ուղևորւում ուխտագնաց, բարեպաշտ քարաւանները մեծ խմբերով գէպի հեռաւոր անապատներում ապրող հողագործ մենակեացների բնակավայրերը: Կալէդը սպասեց այն վայրկեանին, երբ արևի ժամացոյցը ցոյց տուեց այն ըստէն, որ ըստէին ճանապարհ էր ընկել լոյների խումբն երեք օր առաջ: Երբ այդ ըստէն անցաւ, նա ասաց Եօնասին. «այժմ փըշել տուր փողը և մինչեւ նրանց հասնենք, դու կլինես մեր հրամանատարը: Հրամալիր, առաջնորդիր և ցոյց տուր մեզ հանգստութեան և կոռուի ժամանտկը»:

Մի ժամից յետոյ անապատի փոշուց կազմուած ամպերը ծածկել էին հալածողների խումբը: Դրանք միայն գիշերուայ կարճ ժա-

մերին էին մի փոքր հանգստանում, արեկ մայր մտնելուց յետոյ և արեածագից առաջ էին ազօթում, իսկ կերակրում էին՝ թամբի վրայ նստած:

Լիբանանի ստորոտներում նրանք կորցրին փախստականների հետքերը: Լեռնային անդունդների խճաքարերը և մայրիների թափուղ տերեները ծածկում էին փախստականների հետքերը:

Սակայն Եօնասն այնտեղ ևս գտաւ նըրանց հետքը:

Պամասկոսցիներն իրենց հալածող սարակինոսների ձեռքից ազատուած կլինէին, եթէ այդ հալածող թշնամիների մէջ չգըտնուեր կատաղի սիրով տոգորուած մի մարդ, որի սիրելուն իրանց հետ էին տանում:

Լիբանանի ճանապարհները նոյն իսկ փախչողների համար անտանելի էին դարձել ընկած ժայռերի և ահագին քարաժալերի շնորհիւ:

Արաբացիները կուռում և աշխատում էին, բայց յետ չէին մնում:

Սակայն ինչ նալատակ ունէր այս ամբողջ քրտնացան աշխատանքը:

Լեռնաշղթայի միւս կողմն արդէն բանակած էին հռովմէական գօրքերը, որոնցից

փախստականները բաւականաչափ օգնութիւն կարող էին ստանալ: Հորիզօնում երևում էին Գաբօլայի և Լաօդիցիալի աշտարակները— այնտեղ էր գտնւում վաթուն հազար մարդուց բաղկացած յունաց զօրքը, ով պէտք է Թովմասին ու նրա հետ մնացած մարդկանցը հետևէր մինչև այդտեղ:

Հարկաւ միայն մի խելագարուած սիրահար: «Այնուամենալինիւ մենք պէտք է հասնենք նրանց», ասաց Եօնասը դանդաղող արաբացիներին և Կալէդը համաձայնութեան նշան արեց: Նա կարիք ունէր հէնց մի ալիպիսի մարդու, որ դեռ հաւատում է քաջութեան հրաշագործութեանց: Անտառում պատահեցին նրանք մի փայտ կոտրողի, որին և հարց ու փորձ արին փախստականների մասին:

Բախտը յաջողում էր փախստականներին: Յունաց կայսեր մի հրամանը, որ ճանապարհին հասաւ Թովմասին, պատուիրում էր նրան իսկոյն փոխել ճանապարհը և դէպի ծովափ ուղերուել, ուր նրանք պատրաստի նաւեր կդադար:

Պարզ երևում էր, որ կայսրը վախեցել էր, թէ մի գուցէ փախստականներին տեսնելով՝ Անտիօք քաղաքը պաշտպանող զօրքե-

ըրն իրենց սլատի արիութիւնը կորցնեն:

Գեներալ Թովմասն իւր մարդկանց հետ գտնւում էր ուրեմն ազատ երկնքի տակ, բայց երկիրն արդէն ամբողջապէս թշնամիների ձեռքըն էր և ամուր քաղաքներով ու բազմաթիւ զօրքերով շրջապատուած:

Հալածողները պէտք է օձի նման սողային փախստականների յետելից, ձայն չպէտք է հանէին և աշխատէին, որ իրենց գոյութեան նշանն անգամ չցոյց տան թշնամուն: Ալժմ նրանք ճանապարհորդում էին աւելի գիշերը, քան թէ ցերեկը: Եօնասի տեղագրական ծանօթութիւնը ճակատագրական հետևանք պիտի ունենար փախստականների համար: Գիշերով, սաստիկ վոթորկի միջոցին նա առաջնորդեց սարակինուների զօրքերը դէպի Լաօդիցիալ և այնքան մօտեցաւ քաղաքին, որ կայծակի լուսով կարելի էր տեսնել պարիսպների վրայի գիշերապահին, մինչեւ արաբացիք իրանց նիզակների ծալրելը փաթոթեցին շորերով, որպէս զի ալդ գէնքի փալլիվը չմատնէ իրենց:

Կէս գիշերին նրանք հասան մի խորը հովիտ, որ ալնպէս կապեց նրանց ճանապարհը, որ նրանք մթնումը չէին կարող շարու-

նակել իրանց ուղին և ստիպուած էին այդտեղ
հանգիստ առնել:

Կալէդը պառկեց ծառի տակ և քնեց:

Երբ շարունակ արթուն մնացող Եօնասն
արեածագից առաջ զարթեցրեց նրան, նա
բարկացաւ, որ խանգարեցին իրեն և ասաց,
որ վատ երազ է տեսել: Եւ պատմեց, որ ե
րազում ինքը կոռի մէջն էր, բայց իր սուրը
ոչոքի վէրք չէր հասցնում և շուշանի ցողու-
նի նման այս ու այն կողմն էր տատանւում
իր ձեռքին:

Սա վատ նշան է:

Եօնասը ծիծաղեց այդ խօսքերի վրայ՝ ա-
սելով. «Երազներն անձրեալին եղանակի նշան
են» և հրամալեց բարձրանալ անտառապատ
զառիվալով: Ոչոք այլեւս լոյս չունէր փախս-
տականների յետեկց հասնելու. նոյն իսկ Կա-
լէդը կորցրել էր լոյսը, բայց նա հրամանա-
տարութիւնը լանձնել էր Եօնասին և քանի
որ վերջինս «լառաջ» էր հրամալում, իրենք
պէտք է հնազանդուէին:

Արդէն կէսօր էր, երբ սարի գտաթը հա-
սան: Կալէդը, որ անմիջապէս Եօնասի յետեկց
էր գալիս, երբ նշմարեց իր առաջը տարա-
ծուող տեսարանը, ձեռքերը դէպ երկինք
բարձրացրեց և ակամալ աղողակեց. «Ո՞ւսհ»:

Մի հրաշալի տեսարան ներկայացաւ նրա-
աչքի առաջ. փառահեղ գաշապալորը ծած-
կուած էր տատանուող արմաւենիների ստուեր-
ներով, իսկ գաշտի այն կողմը տարածւում
էր անհուն երկնքի հետ միախառնուող ծովը:
Բայց ամենից հրաշալին այն էր, որ ծովեղըին
ծածանուող արմաւենիների տակ տարածուած
էին փախստական դամասկոսցիների վրանները:

Այստեղ էին հանգստացել նրանք այդ-
քան չարչարանքով լի օրերից յետոյ և կար-
ծում էին, թէ արդէն ամենատապահով վիճա-
կի մէջ են: Նրանց առաջը ծովն էր, որի վրայ
տատանւում էին յունական առագաստանաւե-
րը և ծովերին մօտեցրած մակոկները, որ-
պէս զի հէնց ոլ' մակընթացութիւնն սկսուի,
փախստականներին իրենց մէջն առնեն: Իսկ
նրանց յետեւը գտնւում էր անտառապատ լեռ-
նաշղթան, իսկ լեռնաշղթայի միւս կողմն եր-
կու ամբացրած քաղաքներ:

Ո՞վ չէր մտածի, թէ հաճելի կլինի այս
արմաւենիների տակ հանգստանալը:

Կալէդը սպասեց, մինչեւ որ ամբողջ զօր-
քը հաւաքուեց և յետոյ հրամալեց ամենքին
ծունկ չոքել և աղօթել: — Այս Փանատիկոս
ամբոխն ամեն մի յարձակումից առաջ միշտ
աղօթում էր: — Յետոյ իւր մարդկանցը բաժա-

նեց երեք խմբի: Առաջընթացների գլխաւոր կարգեց Եօնասին, պահեստի խմբի հրամանատարութիւնն ինքը յանձն առաւ, իսկ Դերարին յանձնարարեց, որ երրորդ խմբով թըշնամու նաւակներին տիրանալ:

Առաջին երկու խմբերը միաժամանակ անտառից դուրս գալով՝ յարձակուեցան անդորր բանակած դամասկոսցիների վրայ: Առաջին երկիւղի միջոցին դրանց մի մասը փախաւ դէպի նաւակները, որպէս զի ծովով մըտնելով փախչեն: Դրանք շուտով նաւակներն ափից արձակեցին և չնայելով տեղատութեանը՝ դէպի ծովի խորքը գնացին: Այդ բանը տեսնելով կատաղի Դերարը, կոփւների խեղկատակը, իրագործեց նաւերին ձիերով հեկատակը, իրագործեց նաւերին ձիերով հետեւ համարձակ գաղափարը — մի միտք, որի նմանը չկալ պատերազմական արուեստի պատմութեան մէջ:

Արաբական պատմագիրները խօսում են Ալլահի այն հրաշքի մտսին, որ ծովին հրամայեց՝ յունական նաւակների տակից անյալտանալ և ջրի մակերևոյթի վրայ փախուստ տուղներին՝ հեծեալների խմբերի ձեռքն ընկնել: Դերարի ձիաւորներն իրանց թամբերի վրայ նստած՝ ձեռք բերին յոյների նաւատոր միզը և չթողին, որ մի նաւ անդամ ադատուի

իրանց ձեռքից: Մի ժամից յետոյ վրայ հասած մակընթացութիւնն իւր հետ արիւնոտ դիակներ միայն տարաւ:

Երկրորդ խումբը, Եօնասի հրամանատարութեան ներքոյ, աւելի ծանր վիճակի մէջ էր: Թովմասը և իւր մարդիկն այլես ժամանակ չգտան իրանց վայր դրած զէնքերը վերցնելու, բայց դրա փոխարէն մի ուրիշ բանի համար ժամանակ ունեցան: Յուսահատութեան կոփւների մէջ ենք գտնում մենք այս սիրուն մտքի կրկնութիւնը:

Երբ պատերազմողները տեսան, որ իրենցից աւելի զօրեղ թշնամուց յարձակման ենթարկուեցան, միատեղ հաւաքուած կանանց, երեխաների և՝ ծերերի շուրջը մի երեսակ շրջան կազմեցին և իրենց գոտիներից կախուած շղթաները կապեցին իրենց կողքին կանգնողների գոտիներից, որպէս զի իրանցից ոչ մէկը չկարողանալ փախչել, այլ ստիպուած լինի հէնց կանգնած տեղն ընկնելու: Այսպէս կանգնած էր այս փոքրիկ խումբը մետաղեայ գոտու նման՝ յարձակուողների գիմաց: Եօնասը բէզը մտածում էր կրկնել այստեղ այն, ինչ որ Արու Օքայդահն արաւ Փամասկոսի առաջ: Կալէդը նրան լիազօրութիւն էր տուել: «Անձնատուր եղէք և կենդանի կմնաք», աղաղակեց

նա հեռուից: «Անիծեալ լինիս, ուրացող»,
պատասխան ստացաւ նա: «Եւգոկսիային ինձ
յանձնեցէք», աղաղակեց նա երկրորդ անգամ
և իբրև պատասխան միմիայն մի ձայն հնչեց.
այդ ձայնն իւր սիրուհու խօսքն էր. «Անի-
ծեալ լինիս, ուրացող»:

Այդ ժամանակ կրքից կուբացած սիրա-
հարը կատաղի ցասմամբ յարձակուեց իւր հա-
ւատակիցների շղթալի վրայ և առաջինն էր,
որ կտրեց այդ շղթան: Յոյների խումբը յու-
սահատութիւնից արվութեամբ էր կուռում,
բայց այնուամենայնիւ հետզհետէ փոքրանում
էր: Միայն երկու երեք մարդ էին դեռ կըռ-
ւում Եւգոկսիալի շուըջը, բայց դրանք էլ կա-
տաղի սիրահարի ձեռքով գետին գլորուեցան.
կանգուն մնաց միայն գեներալ Թովմասը: Բայց
ուրացողը նրա մետաղապատ կրծքի վրայով
նոյնպէս ճանապարհ հարթեց դէպի իւր սի-
րուհին—այդ ժամանակ աղջիկն ինքը վերցրեց
իւր հօրեղքօր գետին ընկած սուրը և անձամբ
սկսեց կռուել իւր նախկին նշանաձի հետ:
Եօնասը նրա սուրը վայր ձգել տուեց, թուաւ
դէպի նա և գրկեց նրան՝ «իմո» ասելով: Բայց
Եւգոկսիան գոտիից դուրս հանելով դաշոյնը,
խրեց իւր սիրտը: Եօնաս բէգն այժմ ձեռ-
քին բռնած ունէր իւր կռիւների վարձատ-
րութիւնը—Եւգոկսիալի դիակը:



1463

20-13

